ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ.69 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հոգեբանի (1 դրույք), լոգոպեդի (1 դրույք) և հատուկ մանկավարժի (1 դրույք) թափուր հաստիքների համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-Դիմում (Զև1),մեկ լուսանկար 3Х4 չափի

-Կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

-Անձը հաստատող փաստաթուղթ,

-Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝(առկայության դեպքում),

-Ինքնակենսագրություն (Զև4)

-Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող թաստաթղթեր (առկայության դեպքում)

-Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. մայիսի 02-ից մինչև մայիսի 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ,կիրակի և ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա 2024թ. հունիսի 07-ին՝ ժամը 11:00-ին, «Երևանի հ.69 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք.Երևան, Նոր-Արեշ 11փ. տ.139: Տեղեկությունների համար զանգահարել 010-45-27-71 հեռախոսահամարով: